

# ԳԻՏԱԿԱՆ Փ

ՀԱՄԱԼՈՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱԾ ԲՆԱԿԵԼԻՈՒԹԵԱՆ ՄՈԼՈՐԱԿԱՑ



բազմաթիւ հարցս, որովք կը զբաղի ոչ միայն ուսումնական աշխարհ, այլև և ամբողջ մարդկութիւնն, անտարակոյս ամենահետաքրքրականն է թէ կայ արդեօք կեանք ի մոլորակս: — Այս հարցը նոր չէ, այլ ի հին ժամանակաց յարուցուած խնդիր մը, և վրան շատ խօսուած: բայց յասպարփղի գիտութեան շատ դանդաղաքայլ յառաջեր է, և միայն մեր դարուած մէջ կրնայ մեծաքայլ ընթանալ:

Օդտուելով ի տեսութեանց զանազան դրոց, հանդիսից և օրագրաց, կը չանամ ի զուարճութիւն և 'ի հիտաքրքրութիւն ընթերցողաց, համառօտիւ պատասխանել վերսոյիշեալ հարցին թէ կայ արդեօք կեանք ի մոլորակս:

Այս հարցին վրայ եղած ամէն գրուածք և գրող՝ կարելի է երկու խմբի բաժնել. առաջինն բացարձակապէս կ'ընդունի այն կարծիքը թէ կայ կեանք 'ի մոլորակս' ծիշդ այն ձեռվ ինչ ձեռվ որ կը տեսն, և մեր երկրիս վրայ. իսկ երկրորդ խումբն ընդհակառակն բացարձապէս կը մերժէ զգոյսութիւն կենաց ի մոլորակս:

Լաւ հասկընալու համար այս երկու հակառակ կարծիքը, յառաջ բերենք նախ Պտղոմեան և կոպեանիկեան արևային դրութիւնը: — Առաջինն մինչև չորեքտասաններորդ յ արք կը տիրապետէր, որոյ վարդապետութիւնն էր թէ ալիքզերաց կեդրոն երկիրս է, որոյ համար ստեղծուած են ոչ միայն արև, այլ նաև միւս վեց լուսաւորք, գործ Մոլորակ կը կոչէ Պտղոմէոս, դասաւորելով ըստ իրենց հեռաւորու-

թեան այսպէս . Լուսին , Փայլածու , Արուսեակ , Արև , Հրատ , Լուսըն-թագ և Երեւակ :

Մարդու ի հարկէ այսպիսի գաղափար ունենալով տիեզերաց գրութեան վրայ , և համարելով ինքզի՞քը պսակ արարչութեան , կը հետեցընէ անպատճառ՝ թէ երկիրս ինքն յինքեան է բոլոր տիեզերք , և թէ ամբողջ արարչագործութեան նպատակը , բոլոր կենդանի աշխարհն և ամենայն լուսաւոր մարմինք , իրեն համար և իւր կենաց ի զարդ ստեղծուած են :

Սակայն հնդետասաններորդ գարու մէջ , կոպեռնիկոս աստղաբաշխը , եղծանելով գարական նախապաշարեալ կարծիքը , հաստատեց նոր և կանոնաւոր տիեզերի գրութիւն մի , որ ցարդ իւր անուամբ կը յիշուի յուսումնական այխարչի : Ըստ վարդապետութեան կոպեռնիկեայ , հասարակաց կեղրոնն է Արև , որոյ շուրջ կը թաւալին մոլորակը ըստ իրենց հեռաւորութեան այսպէս . Փայլածու , Արուսեակ , Երկիրս , Հրատ , Լուսընթագ և Երեւակ . (Աւրանոս , Պիսիդոն և Աստեղատիպք վերջը գտնուեցան) ; որով Լուսինն՝ արբանեակ համարուեցաւ :

Սոյն ինդրոյս վրայ գրուած ամէն յօդուածոց և գրոց մէջ մի և նոյն կերպով կը բացատրեն Մոլորակաց անունները , որը առած են և նոքա ի զիցաբանութենէ նախնեաց , ինչպէս Փայլածուն ներկայացած է իրբեն վաճառականութեան կամակատար և կարգագիր աստուած , որոյ նշանն է գաւազան ջ : Արուսեակ՝ համարուած է իրբեն գեղեցկութեան աստուած՝ որոյ նշանն է հայելի ջ : Երկիրս՝ իրբեն ուղղափառ կրօնից նշան , կը ներկայացուի զնդով վրան խաչ ։ Հրատ՝ իրբեն աստուած պատերազմի , կը ներկայացուի վահանի և նիշակի նշանով ծ : Լուսընթագի՝ իրբեն որուման և փայլատակման աստութոյ տուած են այս նշանս Վ , որ կը նշանակէ փայլատակման զիկզակը և Արամաղդայ անուան առաջին գիրը : Երեւակ համարուած է ժամանակի գահրնիկէց և արսորեալ աստուած , որոյ նշանն է գերանդի ծ : Աւրանոսի նշանն է Հերշելին առաջին գիրը ։ , զոր գտած է ինքն Հերշէլ յամին 1781 : Խսկ Պիսիդոնի՝ իրբեն ծովու աստութոյ տուած են այս նշանս Վ , որ կը նշանակէ երեքժանի : Զինացիք ամենահին ժամանակէ ի վեր Արեւը կը ներկայացնէին փոքր շրջանակով ի կեդրոնի կէտ մի ։ Խսկ լուսին նշանն է իր փոփոխութիւններէն մին Յ :

Ցետ համառօտիւ յիշելու արեային զրութիւնը , տեսնենք արդ արևու հեռաւորութիւնն երկրէս և յայլ մոլորակաց և նոցա ծանրութիւնն ու մեծութիւն :

Եթէ համարինք երկրիս հեռաւորութիւնն արևէն 144,000,000 վերստ կամ 153,548,000 քիլոմէտր , և առնելու ըլլանք իրբեն միութեան չափ արշին կամ մէզր ու չափենք մոլորակաց հեռաւորութիւ-

Նըն արեէն, յաջորդ համեմատական թիւերը ունենանք ըստ օրինաց Պոտէի.

Փայլածու	0,4	Լուսընթագ	5,2
Արուսեակ	0,7	Երեակ	10,0
Երկիրս	1,0	Ուրանոս	19,2
Հրատ	1,6	Պիսիդոն	30,0

Արևու զանգուածն գրեթէ մէկ ու կէս միջին անգամ աւելի է քան զգանգուած երկրիս։ Արեգական մակերեւութիւն վրայ՝ 28 անգամ աւելի է ծանրութիւնն քան զծանրութիւն երկրիս երեսը. այնպէս որ եթէ մարդս երկրիս վրայ 4 բուդ կամ վաթառնուվեց ու կէս հազարա կրամ ծանրութիւն ունենայ, արևու վրայ պէտք է վինի 112 բուդ կամ 1862 հազարա կրամ։ Եթէ կշխաքով չափուի, Արեւ 355,000 անգամ աւելի կը կշռէ քան զերկիրս, և 1000 անգամ աւելի քան բոլոր մոլորակներ ի միասին։

### Հարուսնակելի

Քոյա լնկոյգ. — Ճանապարհորդք ի վաղուց ծանուցեր էին ուսումնական աշխարհի Քոյա կոչուած ընկուզին դոյութիւնն յԱֆրիկէ և նորա զարմանալի յատկութիւնները, զորս իսկզբան չափազանց և մինչև իսկ առասպեկտական համարեցան. Այժմ ճշմարիտ իրողութիւն մ'է, և ամէն մարդ կրնայ անձամբ փորձել և տեսնել.

Եւ յիրաւի, միջակ ուժով բնիկ խափշիկ մի, միայն Քոյա կոչուած ընկոյզն ուտելով, կարող է 80 քիլոմէտր ճամբայ ընել օրը՝ Ափրիկէի կիզիչ արեգական տակ, առանց որ և է նեղութիւն կամ յօգնածութիւն զգալու։ Ասոր ապացոյցն է Գաղղիոյ զօրաց մէջ դործածուած պաքսիմատն՝ որ կը կոչուի և փութացնող ։

1885 ին յԱֆէրի, 23 երորդ Արորդ ջոկատին զինուորք, միայն փութացնող պաքսիմատն ուտելով և մաքուր ջուր խմելով, Յունիս ամսուն մէջ կրցան հինգ ու կէս քիլոմէտր ճամբայ ընել ժամը՝ շարունակ տասը ժամ քայլելով Ափրիկէի դժուարին ճամբաներէն, ուր անցնդատ տաք ու անձրեներ պակաս չեն, առանց նեղութիւն և յոգնութիւն իմանալու։ Այս պաքսիմատին ներքին թագուն զօրութիւնը, որ զալտնիք էր, այժմ յայտնի եղաւ որ Քոյա ընկուզին զօրութիւնն է։

Քոյա, զոր բուսաբանք կը կոչեն *Sterculia acuminata* (սրածայր աղբիկ?) գեղեցիկ ծառ մի է 10 էն 20 մէտր բարձրութեամբ, առ ի կախ ճիւղերով և լայն տերևներով՝ նման շագանակի ծառոյն։ Տաս տարուան մէջ իր կատարեալ մեծութեան կը հասնի, յորում կարելի է վրայէն պտուղ քաղել երկու անգամ քառասնական քիլոկրամ։ Այս ծառը կը գտնուի Ափրիկէի արևմտեան եղերքը, Սենեկալիայէն մինչև Գոնկոյ և մասնաւորապէս ծահոմէյ թագաւորութեան մէջ։